# ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ «ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

(19-21 հոկտեմբերի 2005 թ.)

Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի աշխատանքային ծրագրում «Եկեղեցու և հասարակության» քարտուղարների հանդիպումը կազմակերպվում է ամեն տարի: 2005 թվականի հանդիպումը թվով երրորդն էր իր տեսակի մեջ, որին մասնակցում էին շուրջ 60 ներկայացուցիչներ Եվրոպայի Եկեղեցիներից: Սա մի հնարավորություն էր՝ կապի մեջ լինելու միմյանց հետ, իրենց ծրագրերի իրականացման համար գործընկերներ գտնելու ողջ Եվրոպայում, տեղեկացված լինելու եվրոպական քաղաքականության որոշ յուրահատկություններին, ինչպես նաև «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի աշխատանքների մասին:

Այս տարի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի քարտուղարների հանդիպումը տեղի ունեցավ հոկտեմբերի 19-21-ը Բրյուսել քաղաքում, որին Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացնում էր Հոգեշնորհ Տ. Տաթև վրդ. Հակոբյանը:

Հանդիպման նպատակն էր՝ կազմել Եվրոպայի Եկեղեցիներում «Եկեղեցու և հասարակության» քարտուղարների ցանց, ապահովել տեղեկատվությունը նրանց միջև, քննարկել Բրյուսելում տեղակայված եվրոպական հաստատություններում և էկումենիկ կազմակերպություններում առկա զարգացումները, գործընկերներ գտնել համընդհանուր խնդիրների իրականացման համար:

Այս հանդիպման համար ընտրված էին երկու հիմնական թեմաներ, որոնք սերտորեն առնչվում են Եվրոմիության զարգացումների հետ: Դրանք են.

1. **Լիսաբոնի ռազմավարությունը** – Նոր Եվրոհանձնախումբը սկսել է առավել ընդգծել, այսպես կոչված, Լիսաբոնի ռազմավարության կարևորությունը, այն է՝ մինչև 2010 թ. Եվրոմիությունը դարձնել ամենամրցունակ տնտեսությունն աշխարհում: Այս ծրագիրը, որը ստեղծվել էր հավասարակշռելու մրցակցությունը, սոցիալական կառուցվածքն ու բնապահպանական խնդիրները, այժմ թվում է, թե նախ և առաջ ընդգծում է մրցակցությունը: Հրավիրվել էին նաև ներկայացուցիչներ Եվրոհանձնախմբից և Եվրոխորհրդարանից, որպեսզի նրանք մասնակիցներին ծանոթացնեն Լիսաբոնի ռազմավարության տնտեսական և սոցիալական ասպեկտների հետ:
2. **Եվրոպայի և Եվրոպայի սահմանադրության ապագան** – Ֆրանսիայում և Հոլանդիայում տեղի ունեցած ռեֆերենդումի և դրան հաջորդած իրադարձությունների հետևանքով Եվրոպայի սահմանադրության ընդունումը ճգնաժամային փուլ մտավ: Հանդիպման մասնակիցներին տարեկան զեկույցները ներկայացնելուց բացի, նրանց

առաջարկվեց նաև արփահայտել պարբեր եվրոպական երկրներում ապրող ժողովուրդների և այդ երկրների Եկեղեցիների ակնկալիքներն այս առնչությամբ:

Երկրորդ նիսփի ընթացքում մասնակիցները քննարկեցին նաև Եկեղեցիների դերը Եվրոպայի սահմանադրությանն աջակցելու հարցում՝ անդրադառնալով հեփևյալ հարցերին. Եկեղեցիների և օրեցօր աշխարհականացող աշխարհի միջև հարաբերությունները, զաղթականությունը և լարվածության գիփակցումը անվփանգության և մարդու իրավունքները հարգելու համափեքսփում, միջկրոնական հարաբերություններն ու անհանդուրժողականության աճը:

*ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ*
*Միջեկեղեցական հարաբերությունների բաժին*